ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

«12» 05 2026թ. ք. Երևան Թիվ 537-Ա

ՎՈԼՈԴՅԱ ՍԱՄՎԵԼԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ
ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2026 թվականի մարտի 27-ի որոշումը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 20-րդ հոդվածի 7-րդ մասով.

հրամայում եմ՝

1. Արդարադատության երկրորդ դասի խորհրդական Վոլոդյա Սամվելի Մուրադյանին նշանակել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության պետ (գլխավոր 1-ին)՝ ազատելով նրան նույն վարչության պետի տեղակալի (գլխավոր 2-րդ) պաշտոնից՝ 2026 թվականի մայիսի 13-ից:

2. Վոլոդյա Մուրադյանին հանել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ծառայողական առաջխաղացման ցուցակից:

3. Աշխատավարձը սահմանել համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ